

Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մ. ՆԵՐՍԻՍԻԱՆ, «ՀԼՑ ԺՈՂՈՎՐԳԻ ԱԶՆՑՎՐԱԿԱՆ ՊԵՏՎՈՐԵ ԹՅՈՒՐԵԿԱՆ
ԲՈՆԵՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՆՄ 1850—1870 թ. թ.»

(Հայկական ՍՍԹ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1955 թ., 450 էջ)

Հայկական ՍՍԹ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է բնծայել պրոֆ. գոհմ. Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը բյուրջական բռնակառնության դեմ 1850—1870 թ. թ.» ծավալուն աշխատությունը, որն արխիվային նյութերի հիման վրա գիտականորեն մեկնաբանում է Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության նշված շրջանները:

Բազմակողմանիորեն բնեկրվ պատմական դեպքերի ու իրադարձությունների բնույթը, պրոֆ. Ներսիսյանը ցույց է տալիս Հայ ժողովրդի ազատագրական այդ պայքարի մեջ հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների առկայությունը և սոցիալական տարբեր շերտերի (երբեմն իրար հակադիր) ակնկալությունները: Աշխատության գիտական արժեքն այն է, որ նա պատմականորեն ճիշտ վերլուծում է գնահատում է Հայ ժողովրդի ազատագրական պայքարի էությունը, զրա մեջ տեսնելով ժողովրդական լայն մասսաների իղձերն ու ձգտումները: Բյուրջական դատարանականության լծից ազատագրվելու համար Հեղինակը բազմաթիվ փաստերով ու վկայություններով ցույց է տալիս հայկական ապստամբությունների ու բարոսացումների բուն ժողովրդական բնույթը:

Աշխատության մեջ բնագրված ժամանակաշրջանը (1850—1870-ական թվականներ) բնորոշ է նրանով, որ հենց այս շրջանում է աճում ու զարգանում ազգային զարթոնքն ու վերելքը:

Աշխատության մեջ ցույց է արվում նաև, որ Հայ ժողովրդի ազատագրական պայքարը մեկուսացած երևույթ չի եղել, այլ դա զուգակցվել է Բյուրջական բռնակառնության տակ դանդաղ սլավոնական, կովկասյան և այլ ժողովուրդների պայքարին, արժանանալով այդ ժողովուրդների բարեկամական ու համակրական վերաբերմունքին: Այս փաստերն առանձնապես համախափ են հանդես եկել Հայ ժողովրդի հերևան ազդեցական, բրդական, վրացական ժողովուրդների մոտ Պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ բուրգ, ասորի բռնակառնությունը Հայ ապստամբների հետ միասնական հակառակ Հանդես է եկել Բյուրջական բռնակառնների դեմ:

Աշխատության մեջ լուսարանված է 1850—1870-ական թվականների Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեջ ռուս ժողովրդի և ռուսական օրինատացիայի խաղաղ կարեւոր դերը և միաժամանակ մերկացված են դիվանագիտական այն խաղերն ու մերկայությունները, որ բանեցնում էին եվրոպական մի շարք պետություններ Հայկական հարցի առնչությամբ:

Ներածության մեջ հեղինակը համառոտակի ուրվագծում է Բյուրջական օսմանական պետության տարածություններն սկսած դեռևս 14—15-րդ դարերից: Ռազմական այդ արշավանքների ընթացքում Բյուրջական բռնակառնական լծի տակ են ընկնում Քրտիան, Քուրդարան, Արարիան, իսկ հետագայում նաև Ալեքսանդր, Հոնաստան, Քոնստան, Հերցեգովինան, Ղրիմը, Վալարիան, Հոնգարիան, Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, Ալժիրը, Քանիսը, Քուրդուսանը, Արևմտյան Հայաստանի մի մասը, իսկ 16-րդ դարում՝ Անգրիոկոսի մի մասը:

Հեղինակը ցույց է տալիս Բյուրջական արևադարձային տակ դանդաղ այդ ժողովուրդների ծանր վիճակը, նրանց նկատմամբ ցուցարարիչ ազգայնական դատարանական շարժմանը, որն իր հերթին առիթ է տալիս ազգային-ազատագրական շարժման ծավալմանը, նշված ժողովուրդների ապստամբությունների ու բարոսացումների բռնակառն: Անգրադառնալով Բյուրջական բռնակառնական լծի տակ հեծող Հայ ժողովրդի վիճակին, հեղինակը բազմաթիվ փաստերով ներկայացնում է ճորտական կյանքի այն պայմանները, որոնց մեջ գտնվում էր Արևմտյան Հայաստանի բնակչությունը: Ազգային նվաստացումն ու հալածանքը մի կողմից, դատարանական անիրիզ հարկահանությունը մյուս կողմից պատճառ են դառնում դեռևս վաղ շրջանից Արևմտյան Հայաստանի բնակչության պանդխտության ու տեղահանության, որի հետևանքով ամառանում էր երկիրը, քայքայվում ու կազմալուծվում անասությունը:

Պրոֆ. Ներսիսյանը պատմական արժանահավաստ փաստերի զուգակցումով ցույց է տալիս, որ Հայ ժողովուրդը Հյուսիս և հարավային լի տարեկ սուլթանական բռնակառնության ազգային բիրտ նշումներն ու հալածանքը, չի հանդուրժել բուն ժողովուրդը, շարժերն ու ֆիզիկական բնաշնչման դատարանական քաղաքականությունը: Դեռևս վաղ շրջանից հայերը ապստամբել են Բյուրջական բռնակառնության դեմ, համար գործակցելով հարևան եզրայրական ժողովուրդների հետ: Բյուրջական բռնակառնության դեմ Հայ ժողովրդի ազատագրական պայքարն իր բարձրակենտրոն է հասնում 1850—1870-ական թվականներին, երբ Արևմտյան Հայաստանում ծավալվում են ժողովրդական ապստամբությունները, ինչպես և ամբողջ Հայաստանում հրևան են զայրանալու կազմակերպություններ և խմբակցություններ:

Խոսելով Բյուրջական բռնակառնության դեմ Հայ ժողովրդի ազատագրական պայքարին մասնակից հասարակական տարրեր խավերի ու Գրանց վերաբերմունքի մասին, հեղինակը այդ պայքարը իր էությունում ու ընդհանուր գծերով բնութագրել է այսպես. «Ազատագրական պայքարի հիմնական ուժը հանդիսացել են ժողովրդական մասսաները և մասնավորապես»:

Խոսելով Բյուրջական բռնակառնության դեմ Հայ ժողովրդի ազատագրական պայքարին մասնակից հասարակական տարրեր խավերի ու Գրանց վերաբերմունքի մասին, հեղինակը այդ պայքարը իր էությունում ու ընդհանուր գծերով բնութագրել է այսպես. «Ազատագրական պայքարի հիմնական ուժը հանդիսացել են ժողովրդական մասսաները և մասնավորապես»:

պես գյուղացիությունը Ազատագրական շարժման գլխավոր բանակը հանդիսացել են գյուղացիական զանգվածները: Նրանք հանդես են եկել թե՛ ազգային, թե՛ սոցիալական ճնշումների ու կեղեքումների դեմ: Գյուղացիության և ընդհանրապես ժողովրդական զանգվածների պայքարը եղել է հետևողական: ... Ազատագրական այս պայքարն առաջ էր քաշում նաև հողի, ծանր հարկերի և գյուղացիությանը հուշող նման սոցիալական այլ հարցեր» (տե՛ս աշխատության 24-րդ էջը):

Աշխատության առաջին գլուխը վերնագրված է «Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը 1850—1870-ական թվականներին»: Այս գլխում փաստական հարուստ նյութերով ու վիճակագրական ստուգված տվյալներով հանգամանորեն քննվում է ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում բնակվող հայ ժողովրդի ներքին տնտեսական կյանքի վիճակը, անտեսական-քաղաքական տեղաշարժերը, հատկապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու պատմական ակտից հետո:

Ներքորդ գլխում, որը վերնագրված է «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 1850—1860-ական թվականներին», հանդես են բերվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի կոնկրետ իրադարձությունները: Այստեղ հեղինակն իր ուշադրությունը բեռնել է գլխավորապես Զեյթունի 1862 թվականի գյուղացիական ապստամբության վրա, որը հանդիսանում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենափառահեղ էջերից մեկը: Հեղինակը նախքան Զեյթունի ապստամբության հանգամանքներն ու պայմանները բնութագրելը համառոտակի ներկայացնում է Զեյթունի անցյալը, նրա աշխարհագրական-տեղագրական դիրքը, ազգաբնակչության վիճակն ու պայմանները և այլն:

Գյուղացիական ապստամբությունների ու ելույթների հետ մեկտեղ հեղինակը քննում է նաև հայ ժողովրդի ազատագրության համար ծավալված զաղտնի խմբակների և դրանց ղեկավար քաղաքական գործիչների գործունեությունը: Հեղինակն անդրադարձել է նաև 1828—1829 թվականների ռուս-թուրքական պատերազմի շրջանում հայ ժողովրդի ազատագրական պայքարի իրադարձություններին:

«Ազատագրական շարժումները 1870-ական թվականներին» գլխում հեղինակը քննում է 1878 թվականին սուլթանական տիրապետության դեմ բարձրացված Զեյթունի երկրորդ խոշոր ապստամբությունը և նրա արձագանքներն ամբողջ Հայաստանում: Այստեղ պատմական նորահայտ փաստագրերի հիման վրա լուսարևոյում է 1881 թվականին կարի-

նում հիմնված «Պաշտպան հայրենյաց» անունը կրող զաղտնի կազմակերպության գործունեությունը: Նույն այս գլխում հեղինակն անդրադառնում է 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի շրջանում աշխուժացած հայ ժողովրդի ազատագրական պայքարի իրադարձություններին:

«Ազատագրական շարժման դադափարսխոսությունը» գլխում հեղինակը դիտականորեն վերլուծում է ազգային-ազատագրական պայքարի մեջ հասարակական տարրեր խավերի ու խմբավորումների բմբռանումները, դիրքն ու վերաբերմունքը: «Ազատագրական շարժման հոսանքներն ու կապերը» գլխում հեղինակը պարզաբանում է ազգային-ազատագրական շարժումների մեջ դանազան հոսանքների վերաբերմունքի և դործելակերպի արմատական տարբերությունները, ինչպես նաև 1850—1870-ական թվականների ազատագրական շարժման կապերն ու ազդեցությունները: Հեղինակն այստեղ ամենից առաջ ընդգծում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների կապը ռուսական ազատագրական շարժման, ինչպես և կովկասյան ու մի շարք այլ ժողովրդների ազատագրական պայքարի հետ:

«Հայ ժողովրդի ազատագրական պայքարը և արևմտյան պետությունները» գլխում հեղինակը պատմական բազմակողմանի և հարուստ փաստերով ցուցադրել է արևմտյան մի շարք պետությունների խաղացած վառվար դերը, առանձնապես հայկական հարցի արժարժման ու քննարկման գործում:

Աշխատության վերջին գլխում, որը կրում է «Ազատագրական շարժման ռուսական օրինատացիան» վերնագիրը, վերաբաղված է ռուս ժողովրդի և ռուսական օրինատացիայի ունեցած խոշոր դրական դերը հայ ժողովրդի ազգային-ազատագրական հերոսական պայքարի մեջ:

Պրոֆ. Մ. Ներսիսյանի աշխատության վերջում արված է հավելված, որտեղ մեջբերված են մի շարք արխիվային նորահայտ փաստաթղթերի պատճեններ: Գիրքն ունի նաև օգտագործված գրականության և նյութերի մասնակցություններն անդրադրված չլինող, անձնանունների և տեղանունների ցանկ:

Պրոֆ. Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրք տիրապետության դեմ» աշխատությունը արժեքավոր և օգտակար մի աշխատություն է, որը գիտականորեն ներկայացնում է հայ ժողովրդի բազմադարյան ապստամբության ազգային-ազատագրական պայքարի մի շրջանի պատկերը:

Վ. Վ.

